24.10.24 - 24.10.24
14:30
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն

Եվրոպայի քոլեջը Նատոլինում (College of Europe in Natolin) առաջարկում է **եվրոպական ուսումնասիրությունների միջառարկայական մագիստրոսական ծրագիր**՝ ամբողջական կրթաթոշակի տրամադրմամբ։ ԵՊՀ-ի և Եվրոպայի քոլեջի համագործակցության շրջանակում այս մագիստրոսական կրթական ծրագրին դիմելու հնարավորություն ունեն նաև ԵՊՀ ուսանողները։

Ս.թ. հոկտեմբերի 24-ին՝ ժամը 14:30-ին, **ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում** (ԵՊՀ գրադարանի մասնաշենք) տեղի կունենա նշյալ մագիստրոսական ծրագրի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում Եվրոպայի քոլեջի ծրագրերի և հաղորդակցման մասնագետ Տաթևիկ Հովհաննիսյանի հետ։

Հանդիպման շրջանակում կներկայացվի ակադեմիական ծրագիրը, որը ներառում է՝

- մեկշաբաթյա 2 ուսումնական այց տարբեր տարածաշրջաններ,
- լեզուների ամառային ակադեմիա,
- լեզուների հավելյալ ուսուցման հնարավորություն (արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, լեհերեն, ռուսերեն, ուկրաիներեն և իսպաներեն),
- մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ,
- մասնագիտական զարգացման թրեյնինգներ։

Առաջարկվող երկլեզու մագիստրոսական ծրագիրը համարվում է եվրոպական ուսումնասիրությունների համընդգրկուն միջառարկայական ծրագրերից մեկը

Եվրոպայում։

Կրթական ծրագրի մանրամասներին հնարավոր է ծանոթանալ՝ անցնելով հետևյալ հղումով՝ https://www.coleurope.eu/natolin։

Նշենք, որ քոլեջն առաջարկում է կրթաթոշակային տարբեր փաթեթներ ՀՀ քաղաքացիների համար։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am